

Լին ոչ առնու յանձն լսել եւ հաւանել այսպիսի բանից եւ կամ բնաւ հաղորդ լինել այսպիսի խորհրդոյ. այլ յոյժ խռովեալ մեծածայն գոչմամբ ասեր ցամե- նեսեան, թէ «Մի լիցի ինձ ստել Արարչին իմում՝ պատճառանաւք եւ կամ ճշմարտութեամբ, եւ մի՛ ուրանալ զայն առաջի անաւրէն եւ մահկանացու ազգի, որ ուրանայ զուրացողս իւր առաջի Յաւր եւ հրեշտակաց սրբոց: 14 Բա՛ւ լիցի ինձ յաղագս զմտաւ ածելոյ՝ զկարիս եւ զվիշտս զկնոջ եւ զորդ- ւոց եւ զազգի՝ տալ ի մոռացումն զոր ասէն², թէ *Որ սիրէ զկին եւ զորդիս ա- նաւել քան զիս՝ չէ ինձ արժանի*^ա: 15 Այլ դուք, որ այժմ յերեցունց աշխար- հաց եկեալդ էք տանուտեարք եւ սեպուիք, շնորհիւ ողորմութեամբն Քրիս- տոսի լի էք ամենայն զաւրութեամբ եւ լաւութեամբ. զի ըստ ազատութեան արուեստի առաւելեալ էք ամենայն հրահանգիւ, եւ ճանաչիք երեւելի ի մէջ սպայիս³ եւ ի մէջ ամենայն ազգաց՝ ի մարտս եւ ի բոլոր կարգս քաջու- թեամբ⁴. իսկ զճշմարիտ եւ զարդար հաւատն ուսեալ էք յԱստուծոյ ի ձեռն առաքելականն հովուին սրբոյ Նահատակին Գրիգորի եւ Նորին զաւակի. բաւական էք ընդ իւրաքանչիւր անձին տալ պատասխանի, եւ որպէս խոր- հիք՝ կարիցէք արդեալք⁵ եւ առնել⁶: 16 Այլ ինձ ոք ի ձեւնջ՝ զոր ինչ անհնար է ինձ լսել բանիւք, թող թէ եւ առնել արդեամբք՝ մի՛ ասէք»:

17 Եւ լուեալ զայս ամենայն զիսաւսս՝ բազմութեան Նախարարացն աշ- խարհաց երեցունց⁷ ի զաւրավարէն Յայոց ի տեսնէն Մամիկոնէից Վարդ- դանայ, թեպէտ եւ յանհնարին տրտմութիւն ընկղմեալք խռովէին՝ այլ սա- կայն ոչ ինչ թոյլ տուեալ լինէին ի բանիցն առաջարկելոցն, իմացեալ եւ առ կարիս վտանգին եւ այլ հնարս մաղթանաց: 18 Եւ ժողովեալք ի մի վայր՝ կո- չէին առ ինքեանս զիշխանն Մոկաց զԱրտակ եւ զնա առաւել փութացուցա- նէին՝ անձանձրոյթ խանդաղատանաւք Նստել առանձինն եւ խաւսել ընդ սպարապետին⁸ իւրեանց տեսն Մամիկոնէից տոհմին: 19 Եւ Նա ինքն էր այր համեստ, մտացի եւ քաջ, եւ տերն Մամիկոնէից Վարդան առաւելապէս պատուով սիրեր զԱրտակ: 20 Որ եւ հաւանեալ հրամանի Նախարարացն Յայոց՝ յանձն առնոյր ամենայորդոր փութով ջանալ ընդ Նմա յարածամ եւ ա- ղաչել⁹, զոր եւ առնէր իշխանն Մոկաց Արտակ, մերթ առանձինն եւ մերթ

1 Ձ. մտաւ ածելոյ

2 Ձ. որ ասէն

ա Մատթ. Ժ 37

3 Ձ. ճանաչիք երեւեալ սպայիս, *լուսանցքում*՝ ի մէջ. Գտ. սպայից

4 ՏՏ. եւ ի մարտս եւ ի կագս քաջութեամբ

5 Ձ. արդեալք...

6 ՏՏ. կարիցէք առնել

7 Ատ. եւ երիցունց

8 Ձ. *Նախ*՝ սպարապետին, *յետոյ*՝ ա-ն քերուած. *այսպէս եւ յետոյ*

9 ՏՏ. յարածամ աղաչել